

մածեան, որ իր բոլոր ճարպիկութեամբ, իր բոլոր լատինասիրութեամբ չկրցաւ յաջողել. այնպէս որ իր ուղղութիւնը արդարայնեւ չամար չխղճեալ մատնացոյց ընել այնպիսի գէմքեր, որոնք բոլորովին տարբեր հանգամանք ունին, պատմական դետնի վրայ եւ երբեք չեն ուժաւորեր իր փաստերը:

Այլոտ կատարեւապէս ուղղամիտ է իր ընթացքին մէջ եւ իր յաջողութեան միջոցները բոլորովին տարբեր:

Խօսքով սիրտ ու միտք գրաւել աւելի կը սիրէր՝ քան թէ կոպիտ ուժով:

Այս էր պատճառը որ սիրելի եղաւ ամենուն եւ խստապահանջ Չամչեան, որ Հաննէէն ետքը, Այլոտի կեանքը պատմականացընող առաջին պատմագիրն է, գովեստով եւ յարգանքով կը խօսի: Չամչեան, որ գիտէ պատմական ամէնէն ստոյգ իրողութիւններն իսկ խեղաթիւրել, երբ ուզէ, Այլոտի յարաբերութիւններն ու վերաբերութիւնները կ'աթոյլիկութեան նկատմամբ՝ իրենց բնական եւ իրական վիճակին մէջ պատկերացուցած է¹:

Անշուշտ Գաղղիոյ դեսպան Վիլնէօվ Մարգիզ՝ սեղան մը տալով Հայոց պատրիարքին, իր համարումը պիտի չյայտնէր, եթէ Այլոտին ընթացքը բոլորովին տարբեր չըլլար իր նախորդներու ընթացքէն:

Այլոտ կրցած էր իր բեմը ոգեւորել այնպիսի գաղափարներով, որ եթէ նախանձոտ «սեւագլուխ»ներու չգիտես ինչու ծանր կու գային, անդին ժողովուրդը կը շինուէր, եւ հոգեւոր կեանքը ուժաւորելու պարտքը ինքնին կը զգար:

Օտարազգիները մամաւանդ աննախանձ կը հիանային ու կը համակրէին Հայոց պատրիարքի

¹ Չամչեան Հատոր. Գ. էջ 775—776: Նոր պատմագիրներուն մէջ մամաւորապէս կը շեշտեմ Ս. Պալասանեանի շատ ընտիր գնահատումը (Պատմ. Բ. տպ. Թիֆլիս 1895. էջ 708—711):